Թելլոյի Յովհաննէս Անդափի Խարաճան գիւղէն գաղթած է ի Խաստուր ռուսաց միջին պատերազմին, կը պատմէր Խարաճանայ վերան հիանալի պատմութիւններ, սա հետաքրքիր էր ամեն բանի, անցած և դարձածն իբրև պատմագիր մի առ մի կը պատմէր։

Այս տեսակ անձինք որ իւրաքանչիւր գիւղի մէջ մի հատ և կամ երկու երեք գիւղի մէջ մի հատ կը ճարուին, որոց մեռնելէն յետոյ այն ամեն կարևոր աւանդութիւններ կանհետին։

Ինձ պատահած է այս գիւղը ռէս Շամոյ, որ 100 տարեկանից վեր էր։ Սա հիանալի կերպով կը պատմէր Բաղրևանդայ վիճակի մէջ անցածն ու դարձածն. ինք Թիկնապահ եղած էր Պարսից արշաւանաց միջոցին աննման հերոս Խաչատուր վարդապետին. որոյ պատմութիւնը թէև Սիմէոն վարդապետ գրած է, բայց համեմատելով ռէս Շամոյի պատմութեան՝ հաղիւ $^{1}/_{10}$ը լինի։

Քանիցս փափաքեցայ մի յարմար միջոց գտնել, խօսակցութիւնը գրի առնել. մի օր ևս լսեցի թէ մեռած է։

Պատմագրի մահուան չափ ինձ ցաւ տուաւ նորա մահը։

Լաւ չէր լիներ կարգ մի գրողներ փոխանակ իւրեանց անփորձ խելքին կրթնելու, գտնէին այսպէս հաղուագիւտ անձեր, որոցմէ օգտուէին։

Ռէս Շամոյի մահուանից յետոյ չկարողացայ ամբողջ Բաղրևանդայ մէջ գտնել մի հայ, որ կարողանար նորա պատմութեան $^{1}/_{100}$ը անել։

Խաստուր այժմ կայ ուսումնարանը Միացեալ ընկերութեան. ուր կը դասախօսէ Պ. Խաչատուր, որ բաւական գործունեայ ուսուցիչ մի է։